ԻՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հեռախոսային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված 115768084 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի փետրվարի 13-ին կնքված N 115768084 պայմանագրում 2017 թվականի հոկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ:

Պայմանագրի կողմը գրությամբ տեղեկացրել է Պատվիրատուին, որ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ-ի Կանոնադրության՝ 2017 թվականի հոկտեմբերի 4-ին գրանցված փոփոխության համաձայն Ընկերության ֆիրմային անվանումը փոփոխվել է, և ընկերության նոր ֆիրմային անվանումն է «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ:

Փոփոխության նկարագրություն:

2014 թվականի փետրվարի 13-ին կնքված N 115768084 պայմանագրի 1-ին պարբերությունում և 7-րդ կետում «ԱրմենՏել» ՓԲԸ» բառերը փոխարինվել են «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ» բառերով:

Փոփոխության հիմնավորում:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջների:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հայկ Վարդանյանին:

Հեռախոս՝ (010) 65 16 31:
Էլ. փոստ՝ info@cep.am :

Պատվիրատու՝ ***ՀՀ ԲՆ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

«13» փետրվարի 2014 թ. N 115768084 պայմանագրում
փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «18» «10» 2017թ.

ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Մ. Գալստյանի, որը գործում է պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մի կողմից, և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), ի դեմս լիազորված անձ Ռ.Գևորգյանի (նույնականացման քարտ՝ 002851202, տրված՝ 11.03.2014., 004-ի կողմից) որը գործում է 28.09.2017թ. տրված թիվ 00233/17 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջներով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2014 թվականի փետրվարի 13-ին կնքված N 115768084 պայմանագրի 1-ին պարբերությունում և 7-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1. «ԱրմենՏել» ՓԲԸ» բառերը փոխարինել «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, և կողմերի միջև 2014 թվականի փետրվարի 13-ին կնքված N 115768084 պայմանագրի անբաժան մասն է:

2.2. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Բաժանորդ	Օպերատոր
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ**
ք.Երևան, Արմենակյան 129	ք.Երևան, Ահարոնյան 2
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011064087	ՀՀ 163004038879
ՀՎՀՀ 01573524	ՀՎՀՀ 02500052
«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն	«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի լիազորված անձ
Մ. Գալստյան	**Ռ. Գևորգյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.